N 01/01-1561
«09» 12 2024

«Էկոմիքս» ՍՊԸ
(ք. Երևան Հալաբյան 18,
հեռ. 098-360-326,
էլ. հասցե tenders@360shinbaza.am,
ՀՎՀՀ 01255701)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Էկոմիքս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 21.11.2024 թվականին կնքվել է N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ՇԱ-8-6 գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և ժամկետներում Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված ապրանքները: 2024 թվականի նոյեմբերի 26-ին Ընկերության կողմից ապրանքները մատակարարվել են, սակայն 46-րդ չափաբաժնի մասով նախատեսված ապրանքները (40 հատ - նրբատախտակը) չեն համապատասխանել պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետը՝ (մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում), «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը 2024 թվականի դեկտեմբերի 9-ին մասնակի միակողմանի լուծում է պայմանագիրը՝ չմատակարարված ապրանքների մասով:

Տեղեկացնում ենք, որ «Էկոմիքս» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900018001876 հաշվեհամարին փոխանցել 1368,8 (մեկ հազար երեք հարյուր վաթսունութ ամբողջ ութ տասնորդական դրամ)՝ որպես տուգանք (Պայմանագրի 6,3 կետի համաձայն):

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանգրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և **մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում ենք՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում **պայմանագրի կատարման ապահովման** գումարը կազմում է 28000 (քսանութ հազար) ՀՀ դրամ և **որակավորման ապահովման գումարը** կազմում է 42000 (քառասուներկու հազար) ՀՀ դրամ, որը անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական «900018001876» հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, եթե մինչև 2024 թվականի դեկտեմբերի 16-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված գումարները, ապա «Էկոմիքս» ՍՊԸ-ն չի ներառվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024 թվականի դեկտեմբերի 16-ը ներառյալ ներկայացնել ՀՊՏՀ-ի գնումների բաժին:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ռեկտորի պարտականությունները կատարող՝ **Մ. Անդրանիկյան**

Կատ.՝ գնումների համակարգող
Գոհար Թադևոսյան
հեռ.՝ 010 593 483